խօսած ատենս, Նորին Բարձրութիւնը մինչև
անգամ խոստացած էր որ Հայաստանի դաւա-
ռաց մէջ ստիկաններ կարգէ մեր Հայոց մէջէն,
և մինչև խոյ բանի մը դաւառներու միւթէսա-
րիկները և քաղաքներու գոյնազամները Հայոց
մէջէն գնել տալ խոստացաւ. բայց ինչպէս գի-
տէք՝ շատ չըջեց կոտաւարութեան փոխախու-
թիւն հասաւ և սակն բան առկա մնաց : Ներ-
կոյ Մեծ եպարքոսին հետ ալ մէկ բանի անգամ
կրցոյ խօսիլ այս սրտազանեալ վրայ. բայց
հետոյհետէ քաղաքական տագնապներ վրայ հա-
նելով ժամանակ չեն թողուցած մեր բանակ-
ցութիւններն որոշ վտխձանի մը հասցնելու :
Այնպիսի ժամանակի մը մէջ ենք որ Պատ-
րիարք մը սրտաւոր է անգուլ յարարերու-
թիւն շարունակել նախարարութեան հետ, զը-
րեթէ սակն որ սրտաւոր է ստալիլ խօսիլ
խօսակցիլ, և ստոր համար կը ստաջարիկեր կի-
թէ յարարերական արտաքոյ կարգի ծախք ընել
պէտք է : Ես սրղէն տկար եմ. չեմ կրնար ա-
մեն ժամանակ յարարերութիւններս շարունա-
կել. անկեղծարար կըսեմ թէ շատ անգամ
սպիտաութիւններ ունեցած եմ այս կէտին մէջ.
ուստի աւելի ազէկ կընէք՝ թէ որ իմ տեղս ա-
ռայգ և ժիր մէկը գնէք՝ որ կարող ըլլայ ամեն
օր պէտք եղած երթեկեկութիւնն ընելու նախա-
բարաց քով. ևս ոչ իմ կարողութեանս չափով
օգնական ըլլալ կը խոստանամ :

ՔԱՅՆԵՐ. — Աչ, ոչ, չենք ընդունիր
Սրբազանին հրամարականը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Կը տեսնէք Սրբազան
Հայր, որ հրամարականի խօսքը ինչ աղմուկ կը
յարուցանէ Ժողովին մէջ. Երևախիտանք քանի-

չքա անգամ յայտարարեցին թէ, Չեր Սրբապետ թեան անձնական տիրութիւնը գիտնալով հանդերձ համոզուած են թէ քաջասովջ և աւայդ Պատրիարք մը չի կրնար աւելի ծառայութիւն մատուցանել Ազգին, ուստի յանուն ժողովին կը խնդրեմ որ բարեհաճիր հրամարականի խօսքը չի կրկնել, և վարել Պատրիարքական բարձր ու փախուչ սրաշանք, որչափ որ կը ներքէն անձնական առողջութիւնը:

(Ընդհանուր հաւանութեան ցոյցեր):

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Խօսքը Տէր Ներսէս Հոյրաբերին է:

Տ. ՆԵՐՍԷՍ Ա. ԱՐԳ. — Պահ մ'առաջ և զամ վիճարանութեանց մէջ անվատահաճութեան բառ մը արդիւնցու, այնպէս կործակեցաւ թէ անվատահաճութեան ոգիէ յառաջ եկած են եղած խօսքերը. քա՛ն լիցի. խնդրոյն կարեւորութիւնը շատ բաներ խօսել կուտայ. բայց անվատահաճութիւն երբէք տեղի չունի, և կը համարձակիմ ըսել թէ անվատահաճութեան բան անգամ ոչ որ իւր բերանը կրածու. Ազգային ժողովը կատարեալ վատահաճութիւն ունի իւր Պատրիարքին և իւր Արքայութեան վրայ:

Մեր գիտենք հաւաստեալ թէ հարստահարութեան խնդիրը Արքայութեան գործոց մէջ ամենամեծ տեղը կը բռնէ միշտ, և կրնամ ըսել թէ այս մասին Արքայութեան բրած գործողութիւններն եթէ հաւարել և անխօսել ուղեներ, այդ հաւարածոյն ասուար հատար մը կը կողմէ: Այո, այսօր Պատրիարք տէր Հոր կարգացած գրոյն նման խիտ շատ Թագրիրներ գրուած ըլլալը գիտենք, Արքայութեան սարսքին է ամեն մէկ հարստահարութեան դէպք ժամանակին Թագրիրով Բ. Գրան ուշադրութեան յանձնել, Արքայութիւն երբէք իւր այս սարստարութիւնը զանց ըրած չէ, սխալ եղած աւտեն Թագրիր գրած և Սրբազան Պատրիարքն ալ իւր բերանացի յայտարարութիւններով այդ Թագրիրներուն աւժ տուած է. Արքայութիւնն ուրիշ ի՞նչ կրնայ ընել, բայց եթէ իւր գրած Թագրիրներուն արդիւնքին սրտակ: Եւ եթէ

գործողութեան արդիւնքը չտեսնուիր, եթէ հարստահարութիւն երեւան ելած է ու չարածուիր, Արքայութիւնն ի՞նչ ընէ. չեմ կրնար ըսել թէ բուն խի կառավարութիւնը յանցար մը երեւան ելած ատեն չուղեր սրտակել. բայց սա զիտեմ որ վնասուողը միշտ Հայն է: և եթէ Հայոց ազգը հաւատարիմ ճանչցուած է Տէրութեան առջև, ո՛ր է իւր հաւատարմութեան վարձքը. ինչո՞ւ իւր օրինաւոր գանձաւանդը չեն ըսիր: Հայոց ազգն իւր հաւատարիմ հարստարմութիւնը կատարած է և կը կատարէ միշտ, բայց փոխարինութիւն մը չէ գտած. մեր ազգն այսչափ հարստահարութիւն կրելով հանդերձ իւր կրօնքն ու գոյութիւնը սրահարանած է. և կործեմ ժամանակն է որ հարստահարութեան խնդիրն այս Ժողովին ուշադրութեանն աւարկայ ըլլայ: Ուստի կուգամ համաձայնելու Պատրիարքան Էֆէնտիին, որ առաջարկեց թէ Գանձաժողով մը գրուի, և անոր յանձնուի սխալ եղած քննութիւններն ընել և տեղեկագիր մը բերել Ժողովին:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Խօսքը Քափամանեան Էֆէնտիին է:

ՔԱՓԱՄԱՆԵԱՆ Մ. ԷՅ. — Հարստահարութեան խնդրոյն վրայ չզգածուող կործեմ ոչ որ չկայ. մանաւանդ ես աւելի. վասն զի եթէ հոս ըսելով միայն զգամուտներ կան, ևս դաւաւայ մէջ գտնուած ատենս տկանատես եղածեմ և ժամանակին օրագրայ ալ գրած եմ: Սրգարե ցաւ է տեսնել թէ Հայը՝ երբ ոչխարի սկս հաւ ժողովուրդ մ'է, իւր տարրը կը վճարէ և սխալ եղած ծառայութիւնները տէրութեան մատուցանել: Եւ շնորհ, փոխանակ անգորութիւն փոխելու՝ հարստահարութեանց ներքե կը ճնշուի: Ես հարցում մ'ըրած կի թէ հարստահարութեանց բարձման համար նոր և ազգու միջոցներ ձեռք առնուած են մի. այս հարցումս ամեն բան կը սրբունակէր իւր մէջ. նոյն խի Սրբազան Հոր առած բացատրութիւնը կապուցուցանէր թէ հարստահարութիւնը գողրած չեն և անոր բարձման մասին գորուար գորուան մ'ի գործ գրուած չէ: Այսօր կուտեմ մեզ Նորին Սրբազանութիւնը թէ նոր միջոցներ

ձեռք առնուած են Մեծ Կարբրութիւն մատուցուած այն խնդրագրով՝ որ հիմա կարգացուեցաւ Նորին Սրբազանութիւնը, յայտնեց նաև թէ այդ վերջին խնդրագրին վրայ մէկ քանի օրէն ետե վերջնական սրատարման ընդունելու խառտում ստացեր է Մեծ Կարբրութիւն:

Պատրիարքան Էֆէնտի յանձնաժողով մը կառաջարկէ. սա առաջարկութեան ևս ալ կը ձայնակցիմ բայց սոյնմանաւ մը. այն է սոյսսել Մեծ Կարբրութիւն տրուելիք սրատարմանին. որ եթէ գոհացուցիչ չըլլայ, այն ատեն յանձնաժողովը կազմենք և տեղեկագիր մը սրատարմութեան տանք չէ թէ Մեծ Կարբրութիւն՝ այլ ուղղակի վեհախառ Սուլթանին մատուցանելու համար:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Խօսքը Խօժասարեան Էֆէնտիին է:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՅ. — Շնորհակալ ենք Սրբազան Պատրիարքէն և Քաղաքական ժողովին, որ ներկայ փախուչ ժամանակին մէջ թոյլտուութիւն ըրին մեզ Հայաստանի հարստահարութեանց վրայօր վիճարանութիւն բանալ այս Ժողովին մէջ. հարկաւ անոնք՝ որ այս թոյլտուութիւնն ըրին, վատահաճութիւն ունին և գիտեն թէ Հայ ազգը հաւատարիմ է իւր հարստահարութեան սարտուց: Խնդիրն՝ որաւ վրայ կը վիճարանինք, ծանրակշիռ է. այնպէս որ ամանք վիճարանութեան միջոցին մինչև խի կառավարութեան թոյլ վարմանց դէմ գանձատելու ելան թէ հաւատարութիւն ու սրդարութիւն ի գործ չդնէր: Ենթադրենք թէ այս գանձատներն իրաւացի ալ ըլլան արտարին տեսքով, բայց ի ներքուստ չափելով իրաւացի չենք գըտներ. հիմա կրնանք բացարձակօրէն բերաննիս բանալ և ըսել թէ՛ այն կառավարութիւնն՝ որ մէ կը գանձատիւնք թէ արգարութիւն ի գործ չդնէր, նոյն խի արդարութեան գործողութեանը համար կայսր մը գահէն վար տաւ, և նոր կառավարութիւնն իւր առաջին խարրի Հիմացուեին մէջ իտարկի ֆէյֆիէ անունով նախորդ կառավարութիւնը դատարարուեց: Ուրեմն սխալ չէ գանձատիւնք թէ կառավարութիւնն արդարութիւն չգործադրէր. մեր գանձատելու ենք թէ կառավարելու գիտութիւնը չունինք, ոչ

միայն մեր, այլ ամեն այն ազգերն ալ, որ բարոյական գիտութիւն չունին. վասն զի հրամանները չեն որ կկառավարեն, այլ բարոյականն է որ կկառավարէ. ամենէն բարձր հրամանն՝ որ վեհ է. Սուլթանէն կուգայ, զատուիլի մը գործողութիւն սխալ տաս. այդ զատուիլն՝ որ կարգաւ գրել չգիտէր և բարոյական գիտութիւնէն զուրկ է, դուն անոր հազար անգամ սրատարիք որ մարդ մը բռնես նէ ձե՛ծելով մի տանիր, դարձեալ մտիկ չընէր. հոս Պատրիարքի անկիւնըն ալ շատ անգամ կտեսնենք այսօրինա զատուիլներ, բայց կրնանք ըսել թէ Պատրիարքի հաւանութեանը կընեն: Ասոնք են որ Հայաստանի դաւառներն ալ սխալի հսկեն. ուր որ երթաս այս տեսակ բարոյական չունեցող զատուիլներ լեցուն են. ըսել է որ մինչև որ ժողովրդեան ակախութիւնը չկրթուի, և բարոյականնին չչտկուի, ասոնց հարստահարութեանց ազատելիք չունինք: Ուստի՛ ըստիմ կործեալ մեր Արքայութիւնը սրատար աշխատութիւն կընէ այդ Թագրիրները գրելով, որոնք ուրիշ օգուտ մը չունին. բայց միայն պատմութիւնը կըլցնեն: Եթէ հարցնէք թէ սասոր հնարքն ի՞նչ է, ևս ալ զայն սխալ ըսեմ, և զժուարին բան մը չէ առաջարկելիքս. բայց Հայոց համար նոր ըլլալուն կրնայ տարօրինակ թուիլ: Պիտէք անշուշտ՝ որ տաճկաստան եթէ մէկ թշնամի ունի, շատ մ'ալ բարեկամներ ունի. բարեկամ կառավարութիւններն ի՞նչ կընեն տաճկաստանը փրկելու և բարեկարգելու համար, միթէ կարելի բա՞ն է որ անոնցմէ աւելի խելք և գիտութիւն ունեցած ըլլանք և ելնենք տէրութեան ըսել թէ մեզի համար սա կամ նա ըրէ: Ուստի առանց իմ առաջարկութեանս ընդարձակութիւն տարու՝ սարդ կերպով կըսեմ, թէ որ նեկայ քաղաքականութիւնը յաջողի և բարենորոգումները ապտարմեալ դաւաւայ համար միայն ըլլան, հինգ տարի չսխալի անցնի և սխալի ըսենք այսօրուան համար թէ ի՞նչ բազմունիք եղեր որ Ընդհանուր ժողովոյ մէջ վիճարանութիւն կընէինք հարստահարութեանց խնդրոյն վրայ. և սխալի տեսնենք թէ ՚՛ տարի ևս բըն այսօրուընէ աւելի զէջ վիճակ մը սխալի ունենանք:

Պէտք է պարզապէս խնդրել թէ քանի որ Տաճկաստանի եւրոպական մասին բնակչաց վիճակն այսօր նկատողութեան տանուած է, տաճկաստանի ստիտական մասին բնակիչ Հայ ազգին վիճակն ալ պէտք է որ նկատողութեան տանուի. այս է սուսիկ մեր ընկերքը :

ՄԻՔԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Այս, ինչպէս որ միշտ քարտուած եմ, դարձեալ կը կրկնեմ որ թէպէտ չորս հինգ տարիէ 'ի վեր մեր գաւառացի ազգայնաց կրած հարստահարութեանը հըրատարակուած են, սակայն մեր ցաւերուն դարմանը և փրկութիւնը Օսմանեան տէրութեան կատարելիք ընդհանուր բարեկարգութիւններէն միայն պէտք է սպասենք :

Այս միջոցին Ատենապետ Էֆէնտին քաւարդ մը դադար տալ ուզեց, սակայն Փափաղեան և Քրիստոստուր Էֆէնտիններու առաջարկով թեան համեմատ խորովը որոշեց աւանց դադարի շարունակել նկատել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսքը Տէր Մատթէոս սրբազանին է :

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊԻՍԿ. — Երեւոթիտան տեարք. ասկէ առաջ 1871 ին Ազգային ժողովոյս սրշմամբ, գաւառական հարստահարութեանց յանձնաժողովոյ՝ խորհուրդս մատուցած տեղեկագիրն անշուշտ աչքէ անցուցած էր, յորում Հայաստանի մէջ գործուած հարստահարութիւնք մի առ մի նշանակուած են, և այժմ նորէն գտնանք թուելու պէտք չկայ. խնդիրն աւանց դարմանին վրայ է : Եթէ երբէք պակաս մը կայ նայն տեղեկագիրն մէջ, այն է որ 20 տարիէ 'ի վեր գրուած թագրիներու իրողութիւնները չեն ներկայացուած Բ. Գրան : Մեր սրշածոնակիցներէն Փափաղեան Էֆէնտի առաջարկեց այժմ այդ բանն ընել : ՏՅ ի խօսքը Հիւսնայունք քրիստոնէից վիճակը բարւորելու եւ բոշխաւորութիւն մ'էր. սակայն նորա տրամադրութիւններն ալ մանուաւոր գաւառաց մէջ անգործադրելի մնացին, որով նայն թուականէն առաջ ինչ որ էր մեր վիճակը նայն է գրեթէ և արդ ուստի այսօր Հայաստանի անգործութեան

համար ինչ դարման պէտք է այն մտածենք . . .

ԹՈՒՍԻՆԵԱՆ ԷՖ. — (Ընդմիջելով) Գարմանին վրայ կը խօսիր. բայց միթէ դարմանն անցած է օրակարգը. և եթէ անցած է, ամենա ալ սերտենք և խօսինք :

ՓԱՓԱՂԵԱՆ Ս. ԷՖ. — Ոչ միայն օրակարգն անցրինքով երկու շարաթ ետ թողունք, այլ և նախարկնութեան ալ կրնանք յղել, որով ամիսներով թերեւ տարիներով ետ կը մնայ հարստահարութեանց խնդիրը. աւելի աղէկ չըլլար :

(Շուկիք)

Ատենապետ Էֆէնտին 'ի լրտութիւն հրտարելով ընդմիջողները, խօսք տուաւ Ատենապետան Սրբազանին՝ որ իւր խօսից թելը նորէն ձեռք առաւ :

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊԻՍԿ. — Ես կատարելեմ որ Փափաղեան Էֆէնտի առաջարկած յանձնաժողովն դրուի, որ ոչ միայն ամեն եղելութիւնները պատմական կերպով անխօփէ, նախարգ տեղեկագրոյն պէս. այլ նայն 71 թուականէն մինչև ցարդ Յ տարուան մէջ սրատահած հարստահարութեանց իրողութիւնները մի առ մի թուելին զատ, նաև քննական եղանակու յառաջ բերէ այն ամեն պատճառներն՝ որոնք անգործադրելի ըրած են Բ. Գրան հրամանները. ցուցնէ թէ ո՞ր վրայն կամ ո՞ր միւթատարիքն է որ հարստահարութեանց բարձման համար իրեն զրկուած Բ. Գրան հրամանները չէ գործադրած. դարձեալ խթիրամի եղանակու քննութիւնք ինչ արդիւնք ունեցած են. թէպէտեւ զարմանալի բան մը չէ այս օրինակ հրամանագրերու չգործադրուիլը, վասն զի այն պաշտօնէին կողմուտի խթիրամի հրամանագրեր, որուն տեսչութեան ներքև կատարուած են հրամանագրոյն առարկայ եղած հարստահարութիւնք, 'ի հարկէ այդ պաշտօնեայն պիտի ըսէ թէ պատուած եղելութիւնք բնաւ գոյութիւն չունին և կամ չափազանցութիւն են. հետևապէս Բ. Գրան ալ Սրբազան Պատրիարքին զայդ պիտի ըսէ. յոր-

մէ յայտնի կերելի թէ ասանկ սրտագաներու մէջ Բ. Գրան խթիրամի հրամանագիրն արգիւնք մը չունենար :

Կեղարկայնեմ խօսքս առաջարկելով որ՝ առաջարկեալ յանձնաժողովը ընդ վրայ ի կողմուտի, և վերջին հինգ տարուան մէջ 'ի Հայաստան գործուած հարստահարութեանց իրողութիւնները՝ հանդերձ անանց համար Բ. Գրան հրամանագրաց չարժադրուելու քննութեանք ներկայացնէ խորհուրդս, սրպէս զի մատուցուի առ կոյսերարան կատարութիւնն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսքը Ետեղեան էֆէնտինն է :

ԵԱՂՃԵԱՆ Օ. ԷՖ. — Փամանակու Պօղոս Պատրիարք քանի մը վարդապետներով Առլի վաչային գնաց այս հարստահարութեանց խնդրոյն համար. երբ Առլի վաչան խափու կը գըրեմ բաւ, Պօղոս Պատրիարք սրատախանեց թէ յիրաւի կը գրեն, բայց Իստիստարէն անգիրն չանցնիր : Ըսել կուզեմ թէ գործադրել տալու եղանակը պէտք է գտնէ Բ. Գրան :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսքը Փափաղեան Ստեփան Էֆէնտինն է :

ՓԱՓԱՂԵԱՆ Ս. ԷՖ. — Ատենապետից վերայ յուսահատութիւն մը կը նկատեմ. ըստ սրբում մեր կը խնդրենք, կատարութիւնն ալ կը խստանայ, բայց բան մը չգործադրուիր. վերապիս խնդրելու մասին յուսահատութիւն կիմանան : Երբ այս Ընդհանուր ժողովին կողմէ կարգեալ առաջին յանձնաժողովը հարստահարութեանց խնդիրն ընդհանրապէս իւր աշարքութեանն առարկայ ըրաւ, նկատեց թէ Ազգի հարստահարութեանց դարմանին համար ինչ կըրնայ ընել, քանի որ իշխանութեան տէրը ինք չէ և կատարութեանն պիտի խնդրէ անանց դարմանը. այս մասին շատ մը մտածելէ ետե յանձնաժողովին անդամները մէկ կէտի մը վրայ միացան. այս է. մեր խնդրելու ենք իշխանութեանն, եթէ այս տարի չկատարեց, գալ տարի վերապիս խնդրելու ենք, և շարունակարար ամեն տարի խնդրելու ետե պիտի ըլլանք. մեր քաղաքականութիւնն այս պէտք է ըլլայ :

ԹՈՒՍԻՆԵԱՆ ԷՖ. — Խնդրեցիք և տայի ձեզ :

ՓԱՓԱՂԵԱՆ Ս. ԷՖ. — Տարակոյս չկայ, երբ բան մը իրաւունքի մը վրայ կը խնդրուի, հարկու օր մը անշուշտ կը տրուի : Բայց խնդրելու համար Ազգը երկու եղանակ ունի. մէկը մը Արշալուսեան ձեռք, և երկրորդ Ազգային ժողովու ձեռք. վարչութիւնը հրատարակուցին Իստանբուլ չունի, բարբաղը հոն կերթայ, վարչութիւնն ալ կ'ստուգէ և թագրիքը կը գրէ. և բարբաղին կրակ՝ գրեցինք և ուղածէ՞ք աւելին գրեցինք և կը ձամբէ բողբոջը :

Իսկ Ազգային ժողովը նկատելն հրատարակային են. ինչ որ մեր հոս կը խօսինք և կը խնդրենք, աշխարհի ներկայութեան կը խօսինք և կը խնդրենք. վասն զի իբրև սահմանադրական ժողով արտօնութիւն տուած ենք ունիլը. գիւններու հոս գալ և մախի ընել, մանուաւոր մեր առեւտրութիւնները կը հրատարակուին և ամենաւն ձեռք կանցնին. նաև կը թօրգմանուին և տէրութեան ձեռքն ալ կանցնին :

ԹՈՒՍԻՆԵԱՆ ԷՖ. — Չթարգմանուած ալ կիմանայ տէրութիւնը :

ՓԱՓԱՂԵԱՆ Ս. ԷՖ. — Ալ աւելի աղէկ ո՞չ սպասէն մեր ժողովին ալ մեր ցաւերը կատարութեան ներկայացնելու միջոցները խորհելու համար է : Մինչև ցարդ Օսմանեան դրօշին տակ ապրեցանք, և մեր կրօնքը, ընդուն և աղաթիւնը մեր պատուական հարց և նախադրեց չնորհիւ պահպանեցինք. այդ դրօշը տիկնոց պիտի բռնենք և անկէ չպիտի բաժնուինք. ու պիտի բռնենք և անկէ չպիտի բաժնուինք. մեր խնդրելը կոյսերական կատարութեանն մեր խնդրելը կարմանը, մեր կենաց, սրաւոյ և ընցաւոյ դարմանը, մեր կենաց, սրաւոյ և ընցաւոյ չից տրտատութիւնը : Ուստի Յ տարի առաջ չից տրտատութիւնը : Աւստի Յ տարի առաջ անգործադրելի մնացին, որով նայն թուականէն առաջ ինչ որ էր մեր վիճակը նայն է գրեթէ և արդ ուստի այսօր Հայաստանի անգործութեան

Սրբազան Պատրիարքին մատուցած վերջին տեղեկագիրն՝ որ հիմա կարդացուեցաւ, ընկնիք ըսի առաջին անգամ խօսելու տանա թէ անոր վրայ զիտողութիւններ ունիմ, որուն մէկը կը ներկայացնեմ : Սրբազան Հայրն եթէ աշարքու-

թիւն ըրած է, կրնայ յիշել թէ մեր գաւառացի ազգայնոց ցաւերն երբ բազմացած են, և տրտուենքները ու բողբոները մեծ արձագանք գտած. անոնց դարմանին համար Բ. Գուռը անմիջապէս յանձնաժողովներ անուանած է աստ, և կամ քննիչներ զրկած է ի գաւառս: Այս քննչութեան արդիւնքը որոշակի յայտնի չէ. բայց բողբոներն ու տրտուենքները զազրած չըլլան կրնայ հետեւիլ թէ ասոնք գոհացուցիչ արդիւնք մ'ունեցած չեն, և աւելի ժամաւաճառութեան ծառայած են:

Երբ ասիէ առաջ Բ. Գուռը հարստահարութեանց յանձնաժողով մը զրաւ, անիկա ժամանակին սրահանջումն էր. բայց անիչ ետեւ տէրութեան վիճակը փոխուեցաւ և իրերն ուրիշ կերպարանք առին. ինչպէս նաև նոյն յանձնաժողովն իր նիստերը զազրեցուց. հիմա նորին յանձնաժողով ուղեւն ուրիշ բան չէ, բայց եթէ ժամանակ կորուսանել: Այդ տեսակ յանձնաժողովներ Պատրիարքարանի ընտրութեամբն ալ զրկուած են երբեմն դուրսերը, բայց դարձեալ արդիւնք մ'ունեցած չեն. ահա Աղտրէկեան Սարգիս էֆէնտին հոս է. երբեմն ազգին կողմէ Զէյթուն գնաց, ամառականներն ալ ազգին սրնտուկէն ստացաւ, բայց չկրցաւ ազգին տեղեկագիր մը տալ և իւր կատարած պաշտօնին արդիւնքն իմացնել Ազգին. այս կէտին վրայ մի պզդէք, վասն զի օգուտ մը չկայ: Բայց իմ ըսած յանձնաժողովս զրէք. կուզէք նէ զիս ալ անդամ ընտրեցէք. մեր կը բերենք տեղեկագիրը և 8 օր չանցած կը բերենք: Երբ հաւասարութիւնը իրապէս և անմիջապէս գործադրուի, երբ երկրին վարչութեան, դատաւորութեան և սրահանութեան մեր ազգային ազատ ընտրութեան իրաւաւոր մասնակցինք, յայնժամ իրապէս կը դարմանուի մեր ազգայնոց վիճակը նոյն լակ Օսմանեան դրօշին տակ: Ահա առաջարկութիւնս գրով կը ներկայացնեմ. ամիսներու հարկ չկայ, 8 օր բաւական է տեղեկագիրը պատրաստելու:

Ստեանարան էֆէնտին խօսքը վերջացնելէ ետե իւր առաջարկութիւնը զրաւոր յանձնեց Գիւանին. որ է

«Կառաջարկեմ որ Ազգային ժողովն անուանէ յանձնաժողով մը. որոյ պաշտօնն ըլլայ տեղեկագիրել այն հարստահարութեանց իրողութիւնները, որք Ազգային ժողովոյ առ Բ. Գուռն մատուցած առաջին տեղեկագրին թուականէն յետոյ՝ Պատրիարքարանի թագրիներովը ծառայուած են Բ. Գրան. յանձնաժողովն 8 օրէն իր տեղեկագիրը պատրաստէ և ժողովիս ներկայացնէ. և ժողովս յետ քննութեան ընդունելով մատուցանէ զայն Բ. Գրան, Ա. տեղեկագիրն ալ ի միասին տալով, և խնդրելով Կոյսերական կառավարութեանէն թէ նոյն տեղեկագրոց պարունակութեանց նկատողութեան ասնքելիլ և թէ հաւասարութիւնն իրապէս և անմիջապէս գործադրուելով՝ երկրին վարչութեան, դատաւորութեան և սրահանութեան՝ ազգային ընտրութեամբ մասնակցութեան իրաւունք տըրտալը »:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսքը Ղազարտեան Բրիտանոստոր էֆէնտին է:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ինչ առաջ խօսող երեսխոխաններ խօսեցան հարստահարութեանց խնդրոյն վրայ և զանազան դարմաններ առաջարկեցին, զորոնք ես ալ կընդունիմ. և անոնց վրայ կը յաւելցնեմ նաև թէ մեր գաւառական սահմանադրական ժողովները պէտք է տեղական կառավարութեանէն ալ ի պաշտօնէ ճանչցուին, և անոնց մատուցած խնդիրները նկատողութեան առնուին. ան ատեն ցաւոց դարման աւելի շուտ կըլլայ: Ըստ մեր սահմանադրութեան Սրբազան Հայրը և ազգին ժողովները երբ յանցաւոր դատեն մէկը, կրնան խնդրել պատժել զանի. նոյնպէս պէտք է պատժեն նաև վալիները զվիթէտարըֆները, եթէ ասոնք յանցաւոր դատուին, մի թէ սարըֆը զգոյմագամս, Բ. Գուռն զվալիս, երբ Տէրութեան հրամանները և երկրին օրէնքները ի գործ չդնեն վալիք. մեր Վեհապետն ալ կուզէ որ օրէնքը գործադրուի և հաւասարութիւնը իրականանայ. և ընչից ու կենաց ապահովութիւնը տիրէ: Բայց քանի որ միաթիթ էֆէնտին զիս դատէ, մի միայն կրօնքին ուժովը, մեր խօսքերն օչինչ եղած

կըլլան: Անոր համար պէտք է ամէն բանէն առաջ խնդրենք որ հաւասարութիւնը գործադրուի. և զայն չգործադրողները ու օրինաց զանցառուները սրտաժուին:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսքը Տէր Ամբրոսիոս հայր սարրին է:

Տ. ԱՄԲՐՈՍԻՈՍ ՎԱՐԳ. — Հարստահարութեանց դարմանի տեսակներուն մանրամասնութեան վրայ խօսքեր եղան. ես ալ համաձայն եմ, և անոնց վրայ յաւելցնելիք կէտ մ'ունիմ. կարծիքս փորձառութեան վրայ հիմնուած եմ, և կըսեմ որ մեր ձեռք առած միջոցներն արդիւնաւորելու մասին մեծ յոյս ունիմ:

Ասիէ առաջ չեմ յիշեր ո՞ր նախարարին օրովն էր, Հայոց ազգին դարաւոր նախարարը եալ մէկ պատճառութիւնը բառնալ ուզուեցաւ, և հրաման եկաւ Բ. Գուռնէն որ Պատրիարքարանը քաղաքական խնդիրներուն համար Թաղրի չգրէ, այսինքն հարստահարութեանց վրայ բան չգրէ. այդ թագրի գրելու տրտօնութիւնը մեր ձեռքէն առնուլ ուզուելուն համար բաւական յուզուեցանք, և զայն սրահանելու համար պէտք եղած ջանքը չխնայեցինք և յաջողեցանք:

Անիչ ետք Բերայի գերեզմանատունն ուզեցին մեր ձեռքէն առնուլ. մեք առանց վճատելու Պատրիարք և Վարչութիւն, ամենս ալ ազգաիրական ոգւով վառեալ դէմ կեցանք, և խնդրելու ներկայացուցինք մինչև այն տեղ ուր կրնար բաւիլ զրիկելոյն ձայնը. այսինքն՝ արքունի պալատը. ուրիչ անմիջապէս հրաման եկաւ որ ազգին ստացուածքն առ ինքն դառնայ, և այն գերեզմանատան վրայ կնիք մ'ալ զարնուեցաւ, իրրե հաստատ ապացոյց Հայոց ազգին սեպհականութիւն մնալու: Ասոնք մէկ մէկ նըշանակ են՝ որ երբ մեր խնդիրները փութոյ սնդուութեամբ կառավարութեան հաղորդենք, կառավարութիւնը չընդունելիք չընէր: Հարստահարութեանց խնդիրն ալ նկատողութեան առնելու համար Գուռը հաւանեցաւ, ինչպէս Սըրբազան Պատրիարք հայրն աւետեց, յատուկ Յանձնաժողով մը կարգել, բայց քաղաքական փոխօրհանութեանց պատճառաւ յանձնաժողովոյ պաշտօնն ես մնաց, թերևս անգործութեան

դատաւարաւուած է. չենք դիտեր արդի նախարարութիւնն ի՞նչ կարծիքի մէջ է. բայց մեր վճատելու չենք, ամեն բանէ աւելի հարստահարութեանց խնդրոյն վրայ զգածուելով զխնդրուներ վերջապէս ուր որ հարկ է. ինչպէս որ այս ընդհանուր ժողովը տէրութեան սերտութեան ժամերուն մէջ իւր ուրախակցութիւնն ուղերձով յայտնելու չվարանեցաւ, նոյնպէս մեր ցաւոց ժամերուն մէջ ցաւերնիս ալ անարատուակ յայտնելու ենք. մանաւանդ երբ ոյնպիսի վեհապետ մ'ունինք, որ մեր ըսել չկրցածը ինք բացարձակապէս ըսու, խտարի թէյթիլն: Ասանկ վեհապետի մը օրով ամեն բարեկարգութիւն յուսալի է, և մենք զայն խնդրելէ ետ կընալու չենք:

ՁԱՅՆԵՐ. — Քուէ, քուէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսքը Գալիամաճեան էֆէնտին է:

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Հարստահարութեանց տեսակներուն վրայ խօսիլ աւելորդ է, վասն զի այդ մասին ընդդիմախօս ալ չունինք և ամենուն քաղաքարը միևնոյն է: Միտն թէ Սրբազան պատրիարքն ըստ որում աւետեց մեզի որ Մեծ Եպարքոսը վերջնական սրտախօսան տալ խօստացած է, առաջարկեցի որ այս վերջնական սրտախօսանին սրտաներ, եթէ գոհացուցիչ չըլլայ այդ սրտախօսանն, լայն ատեն կատարեալ տեղեկագրով մը մեր ցաւերը կըրնանք ուղղակի մեր վեհապետին յայտնել, վասն զի ուրիշ զիմեաւ տեղ մը չունինք, այլ միայն մեր վեհապետին կրնանք դիմել: Ահա այս կէտը քուէի դրուել կառաջարկեմ:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Իմ առաջարկութիւնս այդ չէ, որ պէտք չէ անցունենք. 6—7 հոգիէ բաղկացեալ յանձնաժողով մը դնել կառաջարկեմ, որ վերջին 4—5 տարուան հարջստահարութեանց քաղաւածոյ տեղեկագիրը պատրաստէ և ժողովիս բերէ:

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Բան մը չենք կորսնցնել թէ սր մինչև յառաջիկայ նիստ ըստ սրտաներ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Վիճարանութիւնն իւր վախճանին գրեթէ հասած է, քուէ արկութեան

սխալի ձեռնարկներ, և քուէի զրուելիք առաջարկութիւններն ալ շատ տեսակ չեն. վիճարանութեան փակման մասին Ժողովին կամքն ստանալէ ետեւ, կարգը կուգայ առաջարկութեանց քուէարկութեանը. բայց նախ պարտաւորութիւն մ'ունիմ կատարել. զիտէք որ ծանր խնդիր մ'էր որ սցօր յուզուեցաւ. Սրբազան Հայրն իւր կողմէ քանի մը բացատրութիւններ տուաւ. առաջարկութիւն մ'ալ կայ յանձնաժողով մը զրուելու համար. միթէ Վարչութիւնն ալ սկօար չէ որ լսենք թէ զխտուութիւն մը ունի՞ այս մասին: Այստի քուէարկութեան ձեռնարկելէ առաջ կը հրահրեմ Վարչութեան անդամները որ եթէ զխտուութիւն մը սենին Ժողովին հարգողեն:

ԱՊՐՈ Ս. ԷՖ. — (Ստենագրեալ Քաղաքական Ժողով) Այսօր Ազգային Ժողովը խիստ ծանր խնդիր մը յուզեց և անապարանօր զայն լուծել կուզէ. այս անապարանօր վնասակար կը տեսնեմ, փասն զի զեռ քննելի տեղեր ունի խընդիրը. Սրբազան Պատրիարքը արդէն բոյլ մը առած է, առանց անոր ելքը տեսնելու ուրիշ անօրէնութիւն ընելը քաղաքագիտութեան համաձայն չէ. ընդհանրապէս արդեւ կը լըսէ Վարչութեան ընկերք զարմաններուն: Պէտք է զխնալ որ խնդիրն ըստ ինքեան որչափ ծանր, այս օրուան սրբազաններուն մէջ այնչափ աւելի ծանրացած է. զուք միայն Անաստուրյի կողմէրը սրտաւհած եղելութեանց վրայ կը մտածէք, եթէ Երուսաղիմի Տաճարատանի մէջ եղածներուն հետ բողոքատենք՝ Անաստուրյի մէջ եղածները շատ թեթեւ կը գտնենք: Մէք զմեզ սըլտուանաց տակ չենթարկենք. քանի որ Սրբազան Պատրիարքը Բարձրատախ Մեծ եպարքոսին գիմած է վերջին անգամ և պատասխան ընդունելու խտտում առած է, սկօար է առնուելիք պատասխանին սպասել, փասն զի անապարանօր աղէկ չէ և խոհեմութեան դէմ է. այս առաջարկութիւնն ընելով Վարչութիւնն Ազգային Ժողովը ընելիք գործին դէմ պատուար յարուցանելու միտք չունի. այլ Մեծ եպարքոսին տալիք պատասխանն առնուելէ ետեւ գործեալ կարող է ընել ինչ որ ուզէ. եթէ Չեր

Վարչութեան զխտուութիւնը մտիկ ընել չէք ուզէք, եթէ անխտաւորութիւն ունիք իւր վրայ, Վարչութիւնը հետամուտ չէ պաշտօն վարելու, և յօժարամիտ սրտաւորտու է նեւեւ այն բեռը զոր դրած էք իր վրայ: Ես արդէն ըսած եմ այս Ժողովին մէջ թէ Վարչութիւնը մի միայն ձեռն աջակցութեամբ կրնայ գործ տեսնել. իսկ եթէ Ազգային Ժողովը հարստաւարութեանց խնդիրը ուզէ իւր վրայ առնուլ, այն ստան Վարչութեան գործ չմտար այս մասին: Վերջնապէս Ազգային Ժողովը հեղինակութիւն ունի և կարող է իւր մեծամասնութեամբ ամեն բան ընել. սասոր դէմ ըսելիք չունինք. սակայն Վարչութիւնն ալ իրաւունք ունի իւր զխտուութիւններն ընելու. և առաջարկելու, որ այսօր Վարչութիւնն ալ իրաւունք ունի իւր զխտուութիւններն ընելու. և առաջարկելու, որ այսօր Ազգային Ժողովը սրտակ Սրբազան Պատրիարքը Զօր առնելիք պատասխանին:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ստենագրեալ Էֆէնտի, Վարչութեան դէմ անխտաւորութեան բան մը չկայ. հաճեցէք առաջարկութիւնս Ժողովին քուէին դնել. եթէ Վարչութիւնը կը խտտանայ մեր ուզած տեղեկագիրն 8 օրէն ինք բերել, Յանձնաժողովը առաջարկութիւնս ան առնեն ետ կտանում:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Առաջարկութիւնը մէկ է, որու վրայ յանգած է վիճարանութիւնը. յանձնաժողով մը կատարելիք որ սրտաւորտու ենայ Վարչութեան արձանագրութիւններէն հատրել և ամփոփել այն ամեն եղելութիւն՝ որ հարստաւարութեանց խնդրոյն կը վերաբերի. միայն թէ այս յանձնաժողովին կազմութեան և գործելու եղանակին վրայ երկու կարծիք կայ. մէկ կարծիքն այն է որ յանձնաժողովին ընելիք ամփոփումն 8 օրէն այս Ժողովին ներկայացուի և սկօար եղածն սրտաւորտու. ասի Փափաղեան էֆէնտիին կարծիքն է. իսկ միւս կարծիքն է անմիջապէս Վեհափառ Ինքնակալին մատուցանել. այս ալ Այրարտիտ հայր սարրին կարծիքն է:

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ոչ իմ կարծիքս է այդ ալ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Շատ աղէկ, թող ձեր կարծիքն ալ ըլլայ. սասոր դէմ Քաղաքական Ժողովը Ստենագրեալ Ազգային Էֆէնտին զխտու

թիւն մ'ըբաւ. ըստ թէ ամեն բան կրնաք ընել, բայց սրտամտու մը. այսինքն թէ Սրբազան Պատրիարքը յանուն Վարչութեան բանակցութեան մտած է Մեծ եպարքոսին հետ և զեռ վերջին պատասխանն առած չէ. սկօար է համբերել մինչև այդ պատասխանն առնուի, և ետքը գործել: Ասոր դէմ ալ Փափաղեան էֆէնտին ըստ թէ Վարչութիւնն եթէ ինք յանձնառու կըլլայ մեր ուզած տեղեկագիրն 8 օրէն բերել, յանձնաժողով չենք դնել: Այսպէս չէ՞ Փափաղեան էֆէնտի:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Իմ ըսածս այս է. եթէ յանձնաժողով զնեւէիս Վարչութիւնն իրեն դէմ անխտաւորութեան ցոյց մը կը նկատէ, և եթէ ինք կը խտտանայ 8 օրէն ուզուած տեղեկագիրը բերել, յանձնաժողով անուանելու հարկ չմտար:

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ. — Պարձեալ կերպիւ մը անխտաւորութիւն ցոյցնել է Վարչութեան դէմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Մամիկոնեան էֆէնտին թող բացատրէ ի՞նչ ըսել կուզէ:

ԲԱԶՄԱԹԻԻ ԶԱՅՆԵՐ. — Ոչ ոչ. քուէ կուզենք:

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ. — Ապօրինաւոր է քուէ ուղեւորիք. Վարչութեան դէմ անխտաւորութեան քուէ տալ կուզէք նէ՞ այդ չեմ գիտեր. եթէ այդ քուէն տար՝ կը լինայ ամեն բան. սպա թէ ոչ հակառակեան մէջ կը գլուխուր:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Մամիկոնեան էֆէնտի զխտուութիւնը տեղի չունի. այնպէս կը կարծէ թէ այս Ժողովին կողմէ յանձնաժողով գրուելը Վարչութեան դէմ անխտաւորութիւն կը նշանակէ. բայց կը սխալի. սրտվեառ այս առաջին անգամը չէ որ Ազգային Ժողովը հարստաւարութեանց խնդիրն իւր խորհրդածութեան առաջ կայ կընէ. ասկէց ն տարի առաջ ալ նայն խընդիրն իր մէջ յուզած և յանձնաժողովով մը բընում է. այն ստան Վարչութեան դէմ անխտաւորութեան կտակած մը ընող չեղաւ. Փափաղեան էֆէնտի այս օրուան առաջարկութիւնն ալ ն տարի առաջ գրուած յանձնաժողովին շտ

բանակցութիւնն է, ուրիշ բան չէ, և սասոր մէջ Վարչութեան դէմ անխտաւորութեան ցոյց մը չկայ. հետեւապէս բարբառին անտեղի է սասաջարկութեանց մէջ Վարչութեան դէմ անխտաւորութեան ցոյց մը նշուարել, մանաւանդ այս մասին տրուած բացատրութիւնները ընելէ ետքը: (Լուսի Վարչութեան վսեմ. Ստենագրեալին ըրած յայտարարութեանը մէջ նկատողութեան առնելու կէտը մի միայն այն է թէ Սրբազան Պատրիարքը յանուն Վարչութեան բանակցութեան մտած է Մեծ եպարքոսին հետ, խոհեմութիւնը կը սրահանջէ ըստ, որ այս բանակցութեան ելքին սպասուի:

Խօսքը Վարչութեան անգամ Մագսուտեան էֆէնտիին է:

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Ս. ԷՖ. — Ըստ որում ամեն տեսակ յարարեակիան գործոց պատասխանատուութիւնը Վարչութեան վրայ է, և կը տեսնեմ որ Ազգային Ժողովը անմիջապէս իւր մէջէն յանձնաժողովի մը կազմութիւնը քուէի դնել կուզէ, իրրե անգամ Վարչութեան այժմէն կը յայտարարեմ որ եթէ Ժողովն այս տեսակ յանձնաժողով մը դնէ և ինք միջամտէ այս գործերուն, Վարչութեան վրայ այլ ևս պատասխանատուութիւն չմտար գաւառական հարստաւարութեանց խնդրոյն նկատմամբ, այլ Ազգային Ժողովն ինք իր վրայ առած կըլլայ այս գործը հանդերձ պատասխանատուութեամբ:

ԲԱԶՄԱԹԻԻ ԶԱՅՆԵՐ. — Վիճարանութեան փակումը քուէի գրուի:

ԲՈՒՈՒԵԱՆ Ա. ԷՖ. — Ոչ, անմիջապէս փակել չըլլար:

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ. — Ես խօսք ուզած եմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այո՛, Մամիկոնեան էֆէնտին խօսք ուզած է. բայց Ժողովին պիտի հարցնեմ թէ թոյլտուութիւն կընէ՞:

ԶԱՅՆԵՐ. — Ոչ ոչ. քուէի գրէք:

Ստենագրեալ Էֆէնտին քուէի գրու վիճարանութիւնը շարունակելու կամ փակելու խընդիրը. Ժողովն ընդդէմ 20 քուէի՝ 26 քուէով վիճարանութիւնը փակել ՈՐՈՇԵՑ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Պահ մ'առաջ Փախաղ-
էան, Էֆէնտին իր առաջարկութեան թույլին
տառա Ղլուանէն և բարեփոխեց. կազմեմ որ
կարգայ և բուէի դնենք :

Փախաղէան Էֆէնտին կարգայ հետևեալը.

« Կառաջարկեմ որ Աղղային ժողովն ան-
ուանէ Զանձնաժողով մը, որոյ յորչառնն ըլլայ
տեղեկագրել այն հարստահարութեանց իրողու-
թիւնները, որք Աղղային ժողովոյ առ Բ. Գուան
մատուցած առաջին տեղեկագրին թուականէն
յետոյ՝ Պատրիարքարանի թագրիներովը ծա-
նուցուած են Բ. Գրան. Զանձնաժողովը 8 օրէն
իր տեղեկագիրը պատրաստէ և Ժողովին ներ-
կայացնէ » :

ԱՊՐՕ Ս. ԷՖ. — Եթէ Ժողովը բուէար-
կելով այդ առաջարկութիւնն իր մեծամասնու-
թեամբն ընդունի, այն ասնն Վարչութիւնն
ինքզինք աղաա կը հռչակէ ամէն պատասխանա-
տուութենէ :

ՉԱՅՆԵՐ. — Սպանաղիք է այդ, չենք ըն-
դունիր :

(Երկարատե աղմուկը) :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Խօսք կուղեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսքը Փախաղէան Ս.
Էֆէնտինն է իր առաջարկութիւնը բացատրելու
համար :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Երեկէք որ իրր
տէր առաջարկութեան ես պատասխանեմ՝ Աղրո
Էֆէնտինն :

Առաջարկութեան հոգւոյն ու շաղրութիւնը.
րէք, որ ուրիշ նպատակ չունի, բայց եթէ այս.
տեղեկագիր մը պիտի ելնէ Ընդհանուր ժողովն
զուրա. այս տեղեկագիրը նոր բան չպիտի պարունա-
կէ, այլ վերջին Յ տարուան մէջ մինչև ցայսօր
1876 սեպտեմբեր 10, Վարչութեան գրած թագ-
րիներուն հաւաքածոյն, որպէս զի զիտուցի թէ
Աղղային ժողովոյ առ Բ. Գուան մատուցած
տեղեկագրին ինչ արդիւնք ունեցած է. եթէ

վաղն ուրիշ նոր խնդիր մը ելնէ, դարձեալ
Վարչութեան կը պատկանի անոր մտոյ պէտք
եղածը տնօրինել. յանձնաժողովը չպիտի միջա-
մըտէ նոր պատահելիք խնդրոյ : Կարծեմ թէ
այս բացատրութիւնս գոհ կընէ զամենք. միով
բանիւ իմ գաղափարս սա է թէ ամէն Յ տարի
վիճակագրութիւն մ'ընենք և զիտնանք թէ գա-
ւառայ հարստահարութիւնք ինչ աստիճանի մէջ
են, նուազած թէ յաւելած : Եթէ Աստուած
օղջ պահէ զիս և Երեսփոխան մնամ, Յ տարի
վերջը այս օրուան պէս առաջարկութիւն պիտի
ներկայացնեմ, այս օրուան թուականէն՝ 187
սեպտեմբեր 10 էն յետոյ Պատրիարքարանի
թագրիները քննելու և տեղեկագրելու առ Աղ-
ղային ժողովն, որպէս զի զիտուցի թէ այս ան-
գամի տեղեկագիրն ալ ինչ արդիւնք ունեցած
է, և գաւառացի աղղայնոց վիճակն ինչ աստի-
ճան բարեօքած :

Սոյն միջոցին Փախաղէան Ստեփան Էֆէն-
տին Կրօնական և Քաղաքական ժողովոյ առե-
նադեմներուն և անոնց անդամակցաց ոմանց
հետ միանալով, պահ մը առանձին բանակցելի-
տե և եկաւ Ղլուանին յայտնելու թէ համաձայ-
նած են իրենց մէջ, և իւր առաջարկութեան
գիրը յանձնեց Ղլուանին՝ խնդրելով որ բուէի
դնէ :

Տ. ԽՈՐԷՆ Վ. ՄԻԹԱՐԵԱՆ. — (Ատենա-
պետ Կրօնական ժողովոյ) Կը յայտարարեմ թէ
Վարչութեան կողմէ անհամաձայնութեան կէտ
մը մնացած չէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն ժամ է Փա-
խաղէան Էֆէնտին առաջարկութիւնը բուէի դը-
նել :

ԽՅՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Կառաջարկեմ
նախ Վարչութեան համար վստահութեան քուէ
տալ :

ՄԵԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Եջիւր կը կրկնեմ :

ՄԱԳՍՈՒՏԵԱՆ ՍԵՊՈՒՆ ԷՖ. — Մեր Պատ-
կառելի Ժողովոյը կողմէ Վարչութեան դէմ ան-

վրստահութեան ցոյց մը չենք նշմարեր. ուստի
և վստահութեան քուէի չենք սպասեր : Միայն
թէ Աղղային ժողովոյ կողմանէ այս խնդիրը

տանձնելու զխառնորսութիւն մը նշմարուած մի-
ջոցին, Վարչութիւնն ալ ինքզինքը այս խնդ-
րոյն նկատմամբ ամեն պատասխանատուութենէ
աղաա համարելն յայտարարելու իրաւունք ու-
նէր :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն, բանի որ և-
զած առաջարկութեան նկատմամբ Վարչութեան
և Ժողովին մէջ ծագած անհամաձայնութիւնը
պարզուեցաւ, և Վարչութիւնը համոզուած թէ
իրեն դէմ անվստահութեան ցոյց մը եղած չէ,
վստահութեան քուէ չպահանջէր, այլ ևս Խօ-
ճատարեան և Մելիքեան Էֆէնտիներու առա-
ջարկութիւնը քուէ դնելու հարկ չմնար, հետե-
ւապէս Փախաղէան Էֆէնտին բարեփոխեալ ա-
ռաջարկութիւնը բուէի կը դնեմ :

ՇԱՀՊԱՋ Ն. ԷՖ. — Գրուելիք յանձնաժո-
ղովին պաշտօնը մինչև ո՞ւր պիտի տարածի.
Արրազան Պատրիարքին Մեծ Եպարքոսէն առ-
նելիք պատասխանին ալ պիտի միջամտէ, ի՞նչ
պիտի ընէ. այս կէտն ալ ճշգրէ պէտք է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Տարակցս շունիմ որ
Փախաղէան Էֆէնտին բարեփոխեալ առաջար-
կութիւնը որ Վարչութիւնն ալ ընդունեց, Ե-
սելի ետե, Շահարաղ Էֆէնտին ըրած զխոտը-
թեան պատասխանելու հարկ չի մնար :

Ատենապետ Էֆէնտին կարգայ Փախաղ-
էան Էֆէնտին առաջարկութիւնը, որ է այս

« Կառաջարկեմ որ Աղղային ժողովն ան-
ուանէ Զանձնաժողով մը, որոյ պաշտօնն ըլլայ
տեղեկագրել այն հարստահարութեանց իրող-
ութիւնները, որք Աղղային ժողովոյ առ Բ.
Գուան մատուցած առաջին տեղեկագրին թը-
ւականէն յետոյ՝ Պատրիարքարանի թագրի-
րներովը ծանուցուած են Բ. Գրան. Զանձ-
նաժողովը 8 օրէն իր տեղեկագիրը պատրաս-
տէ և Ժողովին ներկայացնէ » :

Ս. Պ. Պ. ՓԱՓԱՋԵԱՆՅ

ՇԱՀՊԱՋ Ն. ԷՖ. — Յուկցոյցէք նաև
Աղղային ժողովոյ ներկայացնել ՚ի տեղեկարխն
բառը :

ԲԱՋՄԱԹԻ ԶԱՅՆԵՐ. — Ոչ ոչ, տեղըդ

է, կառաջարկենք առանց յաւելումի բուէի
դնել :

Սոյն առաջարկութիւնը բուէի դրուելով,
միաձայն հաւանութեամբ ԸՆԴՈՒՆՈՒՆԵՑԱՒ Ժո-
ղովն :

Ուստիեան Էֆէնտին միայն ձեռնարկ գըտ-
նուեցաւ այս քուէարկութեան մէջ :

Զանձնաժողովի անդամոց բնորոշութիւնը
կատարուելով, Ղլուանի առաջարկութեան վրայ
անդամ անուանեցան .

1. Տ. Կարապետ Եպիսկ. Սերբեան
2. Տ. Մատթէոս " Լաղմիրեան
3. Տ. Յովհաննէս Քճնց. Միլլեան Պ. Փիմրդ
4. Խթիւճեան Կարապետ Էֆէնտին
5. Մելիք-Ղուլի Յարութիւն "
6. Փախաղէան Ստեփան " "
7. Փէշարմաճեան Տ. " "

Ժամը 10 քառորդ անցնելով՝ Ատենապետ
Էֆէնտին ատենը վաղեց, յայտարարելով որ
յաջորդ նիստն 8 օրէն պիտի դուժմորի, յետա-
գայ Օրակարգով՝

Ա. Տեղեկագիր խորհրդարանական յանձ-
նախմբին ի վերայ հարստահարութեանց խնդրոյն :
Բ. Քուէարկութիւն Աղղային արոյ օրինա-
կան բարեփոխութեանց :

Գ. Պատասխանի Վարչութեան Խտան ժո-
ղովոյ՝ Փախաղէան Էֆէնտին հարցման նկատ-
մամբ :


Դ. Վերաքննութիւն սահմանադրութեան .
— Շարունակութիւն վիճարանութեան յոյա-
ձոց թաղական մատակարարութեան :

ԱՏԵՆԱՊԵՏ

Ք. Ս. ՄԵԼԻՔ

ԱՏԵՆԱՊԵՏ

Տ. ԽՈՐԷՆՅԱՆ





ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1 . Խորէն	Վարդ	Մխիթարեան	Ա . ԱՏՆԱԳԵՏ
2 . Յակոբ	Վարդ .	Փափաղեան	Ա . ԱՏՆԱԳԻՐ
3 . Գէորգ	Ա . Գ . Բ .	Արծրունի	Բ . ԱՏՆԱԳԵՏ
4 . Խաչատուր	» »	Տ . Գարրիէլեան	Բ . ԱՏՆԱԳԻՐ
5 . Գարրիէլ	» »	Զիչէրճեան	
6 . Յովհաննէս	» »	Մկրեան	
7 . Արամակէս	» »	Քարակէօրիակի	
8 . Պետրոս	» »	Փափաղեան	
9 . Իգնատիոս	» »	Մանավեան	
10 . Գրիգոր	» »	Սլթեան	
11 . Աթանաս	Քհնյ	Ս . Խաչ յիւսի	
12 . Մեսրոպ	»	Երչեան	
13 . Միքայէլ	»	Պալատու	
14 . Զարարիա	»	Բերայի	

ՔՍԱՆՔԱՆ ԺՈՂՈՎ

1 . Ապրո	Սահակ	Էֆէնտի	Ա . ԱՏՆԱԳԵՏ
2 . Շահապ	Կարապետ	»	Բ . »
3 . Նորեան	Յովհաննէս	»	Ա . ԱՏՆԱԳԻՐ
4 . Պօյաճեան	Յովհաննէս	»	Բ . »
5 . Նորատունիեան	Յակոբ	»	
6 . Կիւրչեան	Սէրոբէ	»	
7 . Լսոյեան	Յովհաննէս	»	
8 . Աղնաւորեան	Յովհաննէս	»	
9 . Սաքայեան	Ալիբաան	»	
10 . Մազառուտեան	Սեպուհ	»	
11 . Կրճիկեան	Սնդրանիկ սլէյ		
12 . Մարկոսեան	Գրիգոր	Էֆէնտի	
13 . Քաղաղեան	Յակոբ	»	
14 . Զրէնիկեան	Յակոբ	»	

ԳԻՆ 2 ՂՐԱԽԵ

ՄԵՓԱՎԱՆՈՒՓԻՒՆ ԿԵԴԴՈՂԱԿԱՆ ՄԱՏՈՒԿԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԵՄԽՈՒՅ ՇԱՏԱՅՆԱԼ

Կը ծախուի ի Դիսանատան Պատրիարքարանի . և Դալաթիոյ Ս
Լուսաւորիչ Յիկեղեցւոյ բանկայը և Հայ գրատնտեսաց քով :